ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021 թվականի «_____» «_____» N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 1910-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» օրենքի 10-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին» N 1910-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Թաղման և դիակիզման կարգի» 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

գերեզմանատան տնօրինություն՝ համայնքի ղեկավարի (Երևանում՝ Երևանի քաղաքապետի) կողմից հուղարկավորության կազմակերպման համար ստեղծված ոչ առևտրային կազմակերպություն, իսկ պետական գերեզմանատների դեպքում՝ լիազորված պետական մարմինը, իսկ մասնավոր գերեզմանատների դեպքում՝ գերեզմանատունը շահագործողը կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այլ անձը.

դիակ - մահացած մարդու մարմին.

աճյուն - դիակիզված մարմին (մոխիր).

ավանդական գերեզմանատուն - դիակների թաղման համար տեղեր (հողամասեր) պարունակող քաղաքաշինական համալիր կամ օբյեկտ.

դիակիզման գերեզմանատուն - աճյունների թաղման գերեզմանատուն.

Խառը գերեզմանատուն - ավանդական և դիակիզումից հետո թաղման համատեղ գերեզմանատուն.

գյուղական բնակավայրի գերեզմանատուն - գյուղական բնակավայրում տեղակայված գերեզմանատուն.

փակ գերեզմանատուն - գերեզմանատուն, որտեղ մնացած ազատ գերեզմանների քանակը պակաս է դրա վրա առկա գերեզմանների ընդհանուր թվի 1%-ից և լրացուցիչ հուղարկավորության վայրեր ավելացնելու հնարավորություն չկա.

բաց գերեզմանատուն - գերեզմանատուն, որտեղ համայնքը անվճար հողատարածքներ է հատկացնում ընտանեկան կամ առանձին հուղարկավորությունների համար.

դիակիզարան - շենք, որը նախատեսված է դիակիզման համար.

դիակիզում - մահացած մարդու մարմնի այրում հատուկ վառարաններում.

կրեմացիոն վառարան (դիակիզիչ) - հարակից սարքավորումների հետ միասին դիակիզման հատուկ վառարան հանույթ հողում՝ դագաղի մեջ կամ առանց դրա մարմինը կամ աճյունասափորը (աճյունով կամ առանց) թաղելու համար.

թաղման սափոր (**աճյունասափոր**) - չքայքայվող նյութից (մետաղյա կամ պլաստիկ) պատրաստված կափարիչի հերմետիկությունն ապահովող սրվակ (տրամագիծը՝ 0,15 մ, երկարությունը՝ 0,20 մ), որտեղ տեղադրվում է մահացածի մարմնի դիակիզումից հետո ստացված մոխիրը.

խորշ - խորացված խուց (բջիջ) պատի մեջ՝ աճյունով սափորի կամ դագաղի թաղման (տեղադրման) համար, որը սովորաբար ծածկված է հուշատախտակով.

կառավարիչ- հիմնարկ-ձեռնարկության (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, տնօրինություն) գործերը վարող՝ տնօրինող պաշտոնյա կամ ղեկավար անձ.

հուշապատ՝ աճյունասափորների տեղադրման համար հատուկ կառուցված պատ.

հուղարկավորություն - դիակը կամ աճյունը թաղելու գործընթաց.

չպահանջված դիակ - դիակ, որը ճանաչված չէ և/կամ չի պահանջվել հարազատների (բարեկամների, ընկերների և այլն) կողմից.

ծիսական շենք, սենյակ, գոտի - կազմակերպված ճարտարապետական միջավայր հրաժեշտի արարողություն անցկացնելու համար.

դամբարան - թաղման համար նախատեսված ստորգետնյա կամ հողի մեջ խորացված շինություն, շենքի կամ շինության մաս.

սանիտարապաշտպանիչ գոտի- արդյունաբերական ձեռնարկությունների, այլ վնասակար ազդեցություն ունեցող օբյեկտների և մերձակա բնակելի կամ հասարակական տարածքների միջև ընկած խզման գոտի: Ստեղծվում է բնակչությանը վնասակար գործոնների (աղմուկ, փոշի, արդյունաբերական թույներ պարունակող գազանման և այլ վնասակար արտանետումներ, վիբրացիա, էլեկտրամագնիսական ճառագայթում) ազդեցությունից զերծ պահելու նպատակով.

բարոյական պաշտպանության - թաղման համար նախատեսված շենքերի և շինությունների գործունեությունը տեսողական քողարկող կանաչապատ շերտ:

1) Ըստ տիպաբանական դասակարգման գերեզմանատները ստորաբաժանվում են.
   - հասարակական,
   - կրոնական,
   - ռազմական:
2) Ըստ թաղումների տեսակների, դրանք կարող են լինել.
   - ավանդական,
   - դիակիզումից հետո թաղումներով,
   - թաղման խառը մեթոդներ:»:

2. Հավելված N 4-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2021 թվականի
_____ N _____-Ն որոշման»

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2021 թվականի
նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման»

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն ընդհանուր կանոններով սահմանվում են գերեզմանատների կառուցապատման, բարեկարգման, պահպանման ու շահագործման (այսուհետ՝ շահագործում) ընդհանուր կանոնները:

2.Գերեզմանատները շահագործումն ապահովվում է դրանց կառավարիչների միջոցների հաշվին:

1) համայնքային գերեզմանատների դեպքում՝ համայնքի ղեկավարի, կամ նրա կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կողմից:

2) մասնավոր գերեզմանատների դեպքում՝ համապատասխան գերեզմանատան կառավարչի կողմից:

3 պետական գերեզմանատների դեպքում՝ ՀՀ կառավարության որոշմամբ լիազորված կամ ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կողմից:

4) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ հասարակական նշանակություն ունեցող գերեզմանատների (Եռաբլուր, Կոմիտասի անվան պանթեոն) և դիակիզարանների դեպքում՝ բյուջետային հատկացումների հաշվին՝ հաստատված տարեկան նախահաշվին համապատասխան:

3. Գերեզմանատները (դիակիզարանները) կազմավորվում են տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ, գտնվելու բնակավայրի հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերի հիման վրա՝ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխան:

1) մասնավոր գերեզմանատները կազմավորվում են համայնքի հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերի հիման վրա՝ Էներգետիկայի, կապի,

տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության հողերի վրա՝ միաժամանակ ապահովելով քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերի պահանջները:

2) մասնավոր գերեզմանատները կազմակերպվում են իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից՝ սեփականության կամ կառուցապատման իրավունքով իրենց տրամադրված նվազագույնը 3 հեկտար տարածքով հողամասերում՝ մասնավոր գերեզմանատների շահագործման գործունեություն իրականացնելու համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվության հիման վրա՝ իրավունքի պետական գրանցում ստանալուց հետո:

4. Գերեզմանատների ու դիակիզարանների հեռավորությունները բնակելի տներից, դպրոցներից, նախադպրոցական, առողջապահական շենքերից ու հանգստի գոտիներից սահմանվում են պայմանավորված վտանգավորության աստիճանով և զբաղեցված մակերեսով.

1) առանց նախապատրաստական և ծիսական գործընթացների մեկ միախցիկ վառարանով դիակիզարանների համար՝ առնվազն 500 մետր,

2) մեկից ավելի վառարանով դիակիզարանների համար՝ առնվազն 1000 մետր,

3) 20-ից 40 հա մակերեսով (40 հա-ից ավելի մեծ մակերեսով գերեզմանատների նախատեսում չի թույլատրվում) խառը կամ ավանդական տեսակի գերեզմանատների համար՝ 500 մետր,

4) 10-ից 20 հա մակերեսով խառը կամ ավանդական տիպի գերեզմանատների համար՝ 300 մետր,

5) 10 հա-ից փոքր մակերեսով խառը կամ ավանդական տիպի գերեզմանատների համար՝ 100 մետր,

6) հուշահամալիրների, դիակիզումից հետո թաղման համար նախատեսված գերեզմանատների, գյուղական բնակավայրերի գերեզմանատների համար՝ 50 մետր,

7) գերեզմանատները՝ անկախ դրանց զբաղեցրած տարածքից, պետք է տեղակայվեն ջրաղբյուրներից առնվազն 250 մետր հեռավորության վրա:

8) նոր նախատեսվող բնակելի տների, դպրոցների, նախադպրոցական, առողջապահական շենքերի ու հանգստի գոտիների համար փակ գերեզմանատներից 50 մետր հեռավորությունները:

5. Գերեզմանատները և դիակիզարանները նախագծվում են դրանց համար հատկացված տարածքների՝ պահանջվող ինժեներաերկրաբանական պայմանների ապահովման դեպքում՝ հետազոտությունների նյութերի փորձաքննության դրական եզրակացության հիման վրա:

6. Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար համայնքի ղեկավարը հաստատում է գերեզմանատների հողերի օգտագործման հատակագիծը (սխեման), որում նախատեսվում են՝

1) գերեզմանատան զբաղեցրած հողատարածքի սահմանները,

2) նոր գերեզմանատան նախագծման դեպքում պարսպից (ցանկապատից) դեպի ներս պաշտպանիչ ծառատնկումների համար հողաշերտ՝ առնվազն 5 մ լայնությամբ՝ պարտադիր ծառատնկմամբ (տեսողական արգելապատնեշ),

3) օրենքով սահմանված չափերով գերեզմանների հատկացման համար տեղամասերը (ծառուղիները, հատվածները, շարքերը) և դրանց օգտագործման հերթականությունը՝ առանձնացնելով ընտանեկան գերեզմանները, անհատական գերեզմանատեղերը (մեկ անձի) և պատմամշակութային տեղամասերը,

4) աճյունասափորների տեղադրման համար հուշապատեր,

5) ճանապարհների ու շավիղների տեղադրությունը, որոնց ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի գերեզմանատան ընդհանուր տարածքի 15 տոկոսը,

6) կանաչապատման տեղամասերը, որոնց ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի գերեզմանատան ընդհանուր տարածքի 20 տոկոսը,

7) գերեզմանատան շահագործման և գերեզմանատնից օգտվելու համար անհրաժեշտ շինությունները, ենթակառուցվածքները՝ ելնելով տեղական պայմաններից (ավտոկայանատեղի, սգո արարողությունների սրահ, գրասենյակ, սգո պարագաների ու ծաղիկների վաճառքի կետ, գործիքների վարձույթի կետ կամ պահասենյակ, ոռոգման համակարգ, խմելու ջրի ծորակ, հասարակական սանհանգույց, պարիսպ (ցանկապատ):

8) էլեկտրահաղորդման գծերի, ստորգետնյա կոմունալ ենթակառուցվածքների, ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղերի կառուցման համար պետք է օգտագործվի սանիտարապաշտպանիչ գոտու տարածքը:

Հիմնական թաղման ծառայությունների տեղադրման, հաշվարկման նորմերը, հողամասերի չափերը սահմանված են ՀՀՇՆ 30-01-2014 շինարարական նորմերում:

7. Համայնքներում նոր գերեզմանատների կազմակերպման, գործող գերեզմանատների ընդլայնման համար հողատարածքները տրամադրվում և նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակվում են նախապես պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցմամբ, անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով հողի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություն կատարելով: Քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ մատուցելու համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանում է համայնքի ավագանին՝ հաշվի առնելով սույն որոշմամբ նախատեսված սահմանափակումները:

1) չի թույլատրվում կառուցել գերեզմանատներ, ծիսակարգերի տներ, դիակիզարաններ, աճյունապատեր շահագործման բարձր աղմուկի մակարդակ ունեցող (օդանավակայաններ), ինչպես նաև տհաճ հոտեր տարածող օբյեկտների մերձակա տարածքներում առանց համապատասխան պաշտպանիչ միջոցառումների.

2) քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ մատուցելու համար նախատեսված շենքերը և շինությունները պետք է տեղակայվեն բնակեցման տարածքում: Նշված կառույցները թույլատրվում է տեղակայվել բնակելի, բուժական, մանկական, սպորտային և մշակութալուսավորչական հաստատություններից 100 մետրից ոչ պակաս հեռավորության վրա.

3) դիակիզարանը (տիպ 1), որի նախապատրաստական, ծիսակարգային և դիակիզման գործընթացներն իրականացվում են մեկ շենքում, պետք է տեղադրվի ոչ թե գերեզմանատան տարածքում, այլ առանձին՝ գերեզմանատանը հարակից տարածքում.

4) դիակիզարանը (տիպ 2), որը նախատեսված է միայն դիակիզման համար, պետք է տեղակայվի քաղաքամերձ վայրում գտնվող առանձնացված տարածքում, այդ թվում արտադրական դիակիզման համալիրի տարածքում.

5) աճյունասափորների (կոլումբարիումի) շենքը կարող է տեղակայվել ինչպես գերեզմանատան, այնպես էլ առանձին տարածքում.

6) աճյունասափորների պատերը տեղադրվում են գերեզմանատան տարածքում: Աճյունապատերը, որոնք տեղակայված են գերեզմանատան պարագծի երկայնքով, կարող են երկակի գործառույթ կրել՝ ծառայել որպես աճյունասափորների պահպանման վայր և գերեզմանատան տարածքի ցանկապատում.

7) քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ մատուցելու համար նախատեսված շենքերի և շինությունների կառուցման տարածքը չպետք է ուղղակիորեն հարի ինտենսիվ երթևեկությամբ ճանապարհներին: Այս օբյեկտներից յուրաքանչյուրը պետք է ապահովված լինի ինքնուրույն մոտեցումներով՝ երթևեկային առանձին գոտիներով.

8) բժշկական հաստատությունների տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ մատուցելու համար նախատեսված սրահների և շենքերի տեղադրումն արգելվում է.

9) Քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ մատուցելու համար նախատեսված շենքեր (Սգո ծիսակատարությունների տուն, դիակիզարան (տիպ 1), գերեզմանատան վարչական և հանդիսավոր շենքեր) նախագծելիս պետք է տրամադրվեն հատուկ սարքավորումներ և միջոցառումներ հաշմանդամների համար հարմարավետ մուտքի համար.

- թեքահարթակներ շենքերի մուտքերի և ելքերի մոտ,
- զուգարաններ՝ սայլակ օգտագործողների համար:

10) Չպետք է իրականացվեն աստիճաններ սգո ծառայությունների շինության մուտքի մոտ, սգո ծեսերի տանը, դիակիզարանում, գերեզմանատան վարչական և հանդիսավոր շենքում, աճյունապատի շենքում, սգո հանդիսությունների սրահում:

11) Հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավ շարժունակության խմբերի թաղման ծառայություններից օգտվելու հարմարության համար խորհուրդ է տրվում այդ խմբերի տեղաշարժման ճանապարհներին ապահովել պատերի անկյունների, կահույքի և սարքավորումների եզրամասերի կլորացում, լրացուցիչ բազրիքների նախատեսում, բացառելով մարդու հասակի բարձրության վրա խոչընդոտների առկայությունը՝ աստիճանների և եզրաքարերի, սայթաքուն հատակների և արահետների, ցանկապատերի և սարքավորումների հյուսված մասեր (կույրերի համար), կառույցների և սարքավորումների դուրս ցցված մասերի տեսքով:

12) Թեքահարթակների թեքությունը պետք է լինի ոչ ավելի, քան 1:6 հարաբերության: Անվասայլակ օգտագործողների քայլուղիների և շրջադարձի հարթակների լայնությունը պետք է լինի առնվազն 1,5 մ:

13) Միջին և մեծ քաղաքներում, անհրաժեշտության դեպքում ՝նաև այլ բնակավայրերում, թաղման հաստատություններում հաշմանդամների տեղաշարժման ուղիներ նախագծելիս խորհուրդ է տրվում առանձնացնել ուղիներ մկանային-կմախքային խանգարումներ ունեցող և կույր հաշմանդամների համար:

14) գերեզմանատան տարածքն, անկախ թաղման եղանակից, պետք է բաժանվի գործառնական (ֆունկցիոնալ) գոտիների.

ա. մուտքային,

բ. արարողության,

գ. վարչական և տնտեսական,

դ. թաղումների,

ե. գերեզմանատան պարագծի շուրջ հոգեբանական (կանաչ) պաշտպանության:

8. Տրանսպորտային միջոցների և այցելուների մուտքի ու ելքի համար տարածքը պետք է նախատեսվի առանձին, պետք է լինեն առանձին տնտեսական մուտք, ավտոկայանատեղի և հասարակական տրանսպորտի կանգառներ: Այս գոտում պետք է նախատեսվեն տեղեկատվական տախտակ, ծաղիկների կրպակներ և վաճառքի կետեր, հասարակական զուգարաններ, նստարաններ, ցայտաղբյուրներ:

Տրանսպորտային ճանապարհից շրջադարձային շառավղի վերջին կետից մինչև մուտքի ու ելքի դարպաս հեռավորությունը պետք է լինի առնվազն 30 մ:

1) հասարակական տրանսպորտի կանգառները և ավտոկայանատեղիները պետք է նախատեսվեն գերեզմանատան մուտքից ոչ ավելի, քան 150 մ հեռավորության վրա

2) արարողության գոտին պետք է տեղակայված լինի հիմնական մուտքի և վարչական շենքի մոտ

ա. արարողության գոտում պետք է տեղակայել սգո և հրաժեշտի շենքեր, պաշտամունքային շինություններ, հասարակական նշանակության հուշարձաններ, հովանոցներով հանգստի հարթակներ, աճյունասափորների հանձնման սրահ, հոգեհանգստի շենքեր-շինություններ

3) վարչական և տնտեսական գոտին պետք է տեղակայել մուտքային գոտուն կից: Այս գոտում մինչև 15 հա տարածք ունեցող գերեզմանատներում պետք է տեղակայել՝ վարչական-կենցաղային շենք, վառելիքի և նյութերի համար նախատեսված ծածկ, հասարակական զուգարան

4) ավելի քան 15 հա տարածք ունեցող գերեզմանատներում պետք է տեղակայել՝ վարչական շենք, հասարակական զուգարան, նյութերի և գույքի պահեստներ, գերեզմանատան սպասարկման մեքենաների և մեխանիզմների տաք կայանատեղի, տրանսֆորմատորային ենթակայան, կաթսայատուն (լոկալ)

5) վարչական շենքի կազմում կարող է նախատեսվել աճյունասափորների պահպանման և առաքման սենյակ

6) թաղման գոտին գերեզմանատան հիմնական գործառական մասն է և բաժանված է թաղամասերի և հատվածների

7) ավանդական տիպի գերեզմանատներում պետք է տեղեր հատկացվեն միայնակ հուղարկավորությունների, ընտանեկան գերեզմանների, զանգվածային գերեզմանների դամբարաններում և հիշատակի կառույցներում հուղարկավորությունների համար

8) դիակիզումից հետո թաղումներով գերեզմանատներում տեղերը պետք է տրամադրվեն.

ա. հողագրունտի մեջ և գերեզմանի վերգետնյա պահոցներում՝ աճյունասափորների թաղում,

բ. աճյունասափորների թաղում շենքերի աճյունապահոցներում և աճյունապատերում,

գ. «չպահանջված դիակի» թաղում, որը պետք է նշվի ընդհանուր հուշարձանով:

9. Հաշմանդամություն և սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց համար, գերեզմանատների հետիոտնային ուղիներում, թաղամասերում և անմիջապես հուղարկավորությունների հարևանությամբ, պետք է նախատեսվեն հանգստի հարթակներ, այդ թվում նստարաններ և այլ տեսակի սարքավորումներ, որոնք կթեթևացնեն շարժումը և կպաշտպանեն մթնոլորտային տեղումներից՝ սակավաշարժուն խմբերի ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

10. Զինվորական գերեզմանատներում կամ հասարակական գերեզմանատների տարածքներում ռազմական հուղարկավորության համար պետք է տրամադրվեն ռազմական պատվոհարթակներ: Նման գերեզմանատների կամ հողամասերի արարողության գոտին պետք է ապահովի պատվո պահակախմբի (ուղեկցորդի)՝ առնվազն զինվորական ստորաբաժանման և նվագախմբի տեղակայումն, ինչպես նաև զինվորական ստորաբաժանման հանդիսավոր երթի համար պատվո քայլերթի ճանապարհ (հարթակ):

Քայլերթի ճանապարհի (հարթակ) լայնությունը պետք է ընդունվի առնվազն 4,5 մ, իսկ երկարությունը՝առնվազն 30 մ:

11. Զինվորական գերեզմանատների արարողության գոտում թույլատրվում է տեղակայել կրոնական կառույցներ և շենքեր, ինչպես նաև «Հավերժական կրակ»-ով հուշահամալիրներ.

1) «Հավերժական կրակ» ունեցող հիշատակի շինությունները պետք է լինեն հրդեհակայունության 1-ին աստիճանի: Հեռավորությունն այրվող նյութեր պարունակող մոտակա շենքերից կամ ծառերից պետք է ընդունել առնվազն 50 մ՝ հուշահամալիրի կոնստրուկցիայով չպաշտպանված կողմից.

2) թաղման վայրերը պետք է նախատեսվեն հետևյալ տեսակների համար.

ա. մեկ գերեզման՝ միայնակ և կարիքավոր քաղաքացիների համար,

բ. 2 - 6 գերեզմաններ՝ ընտանեկան գերեզմանների համար,

գ. ընտանեկան դամբարաններ և տաղավարներ, խմբային 6 կամ ավելի գերեզմանների համար՝ պատահարներից, աղետներից տուժածների համար,

դ. եղբայրական (ընդհանուր) կամ պանթեոններ այն անձանց համար, որոնց աճյուններն ամբողջությամբ չեն պահպանվել, չի հաջողվում պարզել նրանց ինքնությունը, պետության կամ համայնքային բյուջեի միջոցների հաշվին թաղվող միայնակ քաղաքացիների համար, ինչպես նաև զանգվածային աղետներից և այլ արտակարգ իրավիճակներից տուժածների համար:

Գերադասելի է, որ տարբեր տեսակի թաղման վայրերը տեղակայվեն այդ տեսակի թաղումներից յուրաքանչյուրի համար մասնագիտացված տարածքներում:

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ, ԹԱՂՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

12. Սգո երթերի անարգել անցման համար գերեզմանատներում դարպասների լայնությունը պետք է լինի առնվազն 6.0 մ.: Լույսի ներքո գտնվող ծածկի լայնությունը պետք է լինի առնվազն 1,2 մ:

13. Գերեզմանատան մուտքի առջև պետք է թաղման թափորն ուղեկցող հարազատների սպասման և հավաքման համար տեղադրվի հարթակ: Հասարակական տրանսպորտի մուտքերի առկայության պարագայում պետք է տրանսպորտին սպասող ուղևորների համար ապահովել տանիքով տաղավար:

14. Գերեզմանոցի տարածքը պետք է պարագծով սահմանազատել՝ հավաքովի երկաթբետոնե, աղյուսե, քարե պարսպապատով, մետաղական ցանցով կամ կանաչ բուսական (կենդանի) ցանկապատով: Ցանկապատի բարձրությունը, որպես կանոն, պետք է լինի առնվազն 2,0 մ բարձրությամբ: Անտառապուրակի պահպանության գոտում գտնվող գերեզմանատներում կարող է լինել ցանկապատ՝ ծառերից և թփերից պատրաստված, փայտե կամ կանաչ ցանկապատի և խրամուղու՝ 60 - 80 սմ խորության վրա:

15. Բոլոր տեսակի գերեզմանատների համար թաղման վայրերի տարածքը պետք է լինի գերեզմանատան ընդհանուր տարածքի առնվազն 65-75%-ը, կանաչ տարածքների մակերեսն

առավելագույնը՝ 20%, իսկ սպասարկման տարածքների մակերեսն առավելագույնը՝ 15%: Սպասարկման օբյեկտների տարածքների կառուցապատման և բարեկարգման բոլոր աշխատանքները պետք է իրականացվեն առկա ծառերի, թփերի և բուսական հողի առավելագույն պահպանմամբ:

16. Տարածքում պետք է նախատեսվեն շվաքարաններ, պերգոլաներ և նստարաններ այցելուների հանգստի համար:

17. Գերեզմանատների պարագծի երկայնքով, պարսպից ներս կազմակերպվում է օղակաձև (շրջանցիկ) ճանապարհ, որը տնտեսական նշանակություն ունի: Դրա երկայնքով նախատեսվում են զուգարաններ, աղբամաններ և ջրատար գիծ: Ճանապարհի լայնությունը պետք է սահմանել 2.5 մ՝ փոքրաչափ տրանսպորտային միջոցների մոտեցումն ապահովելու նպատակով: Հնարավորության դեպքում կարող է իրականցվել օղակաձև ճանապարհի և պարագծի երկայնքով նախատեսված պաշտպանիչ կանաչ շերտի որոշակի համադրում՝ տարածքի խնայողության նկատառումներից ելնելով.

Անհրաժեշտության դեպքում, գերեզմանատան ներքին պարագծի երկայնքով կարող է տրամադրվել առնվազն 5 մ լայնությամբ պաշտպանիչ կանաչ գոտի, որը կարող է լինել սանիտարապաշտպանիչ գոտու կանաչապատման և տեսողական պաշտպանիչ արգելապատնեշի մաս:

18. Դեպի գերեզմանատուն անցուղիներ և ներհամայնքային ճանապարհներ նախատեսելիս, գերեզմանատան ամենահեռավոր գերեզմանից մինչև անցում, կամ ճանապարհ հեռավորությունը պետք է լինի ոչ ավելի, քան 25 մ: Ընդ որում յուրաքանչյուր թաղման վայր պետք է կողմերից մեկով պետք է կից լինի դեպի կենցաղային տրանսպորտային միջոցների անցուղի մոտեցնող հետիոտնային ուղուն:

19. Հաշմանդամություն ունեցող անձանց և սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց տեղաշարժի համար նախատեսված ճանապարհների հատվածներում, թեքությունները, հորիզոնական հատվածները, գծանշումները, ռելիեֆային տարրերը պետք է ընդունվեն ըստ ՀՀՇՆ IV-11.07.01-2006-ի:

20. Ավանդական թաղման գերեզմանատների թաղման տեղերի չափերը պետք է լինեն ոչ պակաս, քան 1-ին աղյուսակում նշվածները:

Աղյուսակ 1

Մեկ տեղում մեկ մակարդակում թաղումների քանակը	Չափերը մ	
	Լայնություն	Երկարություն (խորությամբ)
1	1,0	2,00
2	1,8	2,00
3	2,6	2,00
4	3,6/1,8	2,00/4,00
5	2,6	4,00
6	2,6	4,00

21. Ավանդական հուղարկավորության յուրաքանչյուր առանձին գերեզմանի համար պետք է տրամադրվի առնվազն 5 մ^2 տարածք:

22. Դագաղով թաղման դեպքում գերեզմանի խորությունը պետք է սահմանվի կախված տեղական պայմաններից (հողի բնույթից և ստորերկրյա ջրերի մակարդակից), ընդ որում խորությունը պետք է լինի առնվազն 1,5 մ (հողի մակերեսից մինչև դագաղի կափարիչը): Բոլոր դեպքերում գերեզմանի հատակի նիշը պետք է լինի ստորգետնյա ջրերի մակարդակից առնվազն 0,5 մ բարձրության վրա:

ա. գերեզմանների խորությունը պետք է լինի ոչ ավելի, քան 2 - 2.2 մ:

բ. գերեզմանի բլուրը հողի մակրդակից պետք է կազմավորել 0,3 - 0,5 մ բարձրության վրա:

23. Հողում աճյունասափորների թաղման համար հարկավոր է յուրաքանչյուր տեղի համար տրամադրել 1 մ^3 թաղման տարածք՝ 0.4 X 0.4 մ գերեզմանի չափով:

24. Աճյունասափորների հուղարկավորության առանձին տարածքները պետք է դասավորվեն երկուական շարքով՝ նախատեսելով յուրաքանչյուր երկու շարքից հետո անցումներ 0,8 մ լայնությամբ:

25. Չի թույլատրվում թաղումներ կազմակերպել գերեզմանների միջև եղած բացակներում, ճանապարհների եզրերին և պահպանական գոտիների սահմաններում, ներառյալ հոգեբանական գոտին:

26. Զանգվածային գերեզմանների կառուցումը թույլատրվում է բացառիկ դեպքերում և միայն պետական սանիտարահամաճարակային վերահսկողության մարմինների հետ համաձայնությամբ, հետևյալ պայմաններով.

ա. չի թույլատրվում մեկ գերեզմանում թաղել ավելի քան 100 դագաղ.

բ. դագաղների միջև հորիզոնական հեռավորությունը պետք է լինի առնվազն 0,5 մ., որը պետք է լցվի հողի շերտով, որի գագաթին դրված են ցախ կամ փշատերև ճյուղեր.

գ. դագաղները մի քանի մակարդակներում դնելիս (ոչ ավելի, քան երեքից չորս), դրանց միջև ուղղաձիգ ուղղությամբ հեռավորությունը պետք է լինի առնվազն 0,5 մ. վերին մակարդակի դագաղները պետք է տեղադրվեն ցածր մակարդակի դագաղների բացակների վերևում.

դ. երկմակարդակ թաղման խորությունը պետք է լինի առնվազն 2,5 մ, այնուհանդերձ պահպանելով նաև գերեզմանի հատակը ստորգետնյա ջրերի մակարդակից առնվազն 0,5 մ բարձր լինելու պահանջը.

ե. հողաշերտի հաստությունը դագաղների վերին շարքից մինչև հողի մակերես պետք է լինի առնվազն 1 մ.

զ. գերեզմանի լիցքի շերտը պետք է ունենա առնվազն 15 սմ բարձրություն:

27. Զանգվածային թաղման գերեզմանում դիակների հանքայնացումը արագացնելու համար պետք է գերեզմանի ստորին հատվածում կառուցվեն ակոսներ և կլանող ջրհորներ, ստորին մասից դեպի գերեզմանի վերին մակարդակ փխրուն նյութով (տորֆ և այլն) լցված օդափոխման հորանի նախատեսում.

28. Էքսհումացիայից հետո, գերեզմանը պետք է անհապաղ լցվի, և հողի մակերեսը պատշաճ կարգի բերվի (հողով հավասարեցվի , ճմապատվի կամ խոտ ցանվի).

29. Զանգվածային թաղման կամ եղբայրական գերեզմանների վրա հուշարձաններ, հուշաքարեր և դեկորատիվ քանդակները պետք է տեղադրվեն բուն թաղման վայրերից դուրս

գտնվող տարածքներում, որոնք պետք է նախապես պահուստավորել՝ նման ճարտարապետական օբյեկտների տեղադրման նպատակով տրամադրելու համար:

ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

30. Կախված տեղանքի ռելիեֆից, առկա կանաչապատումից և այլ բնական գործոններից՝ գերեզմանատունը կարող է լինել.

1) կանոնավոր տիպի - մեղմ ռելիեֆ ունեցող տարածքներում,

2) լանդշաֆտային (հուշաայգիներ)–ռելիեֆի բարդ հատվածներում, ինչը հնարավորություն է տալիս օգտագործել լանդշաֆտային ճարտարապետության տարբեր միջոցներ,

3) խառը տիպի - տարածքի մի մասը լանդշաֆտային լուծումներով և մնացածը՝ կանոնավոր ուրվագծով:

31. Թաղման ծառայությունների օբյեկտների տարածքների կազմակերպման և բարեկարգման բոլոր աշխատանքները պետք է իրականացվեն գոյություն ունեցող ծառերի, թփերի և բուսականության առավելագույն պահպանմամբ.

32. Թաղման նպատակների համար նախատեսված շենքերի և շինությունների տարածքներում պետք է նախատեսել «բարոյական պաշտպանության» կանաչ գոտի՝ առնվազն 20 մ լայնությամբ, մեքենաների, ավտոբուսների և տրանսպորտային միջոցների կայանատեղի, թաղման մասնակիցների համար հարմարավետ հանդիպումների վայրեր, աղբամաններ, աղբահավաքման հարթակներ՝ մոտեցումներով:

32. Ճանապարհային ցանցը գերեզմանատների ողջ տարածքում, առանձին տարածքներում, ներառյալ շենքերի և շինությունների տարածքները, կախված դրանց նշանակությունից և չափից, երթևեկության հաշվարկված ինտենսիվությունից, բաժանված է հետևյալ կարգերի.

1) հիմնական (մայրուղային) ճանապարհներ, կենտրոնական հրապարակներ և գլխավոր նրբանցքներ, որոնք նախատեսված են կենտրոնական հրապարակների, գլխավոր նրբանցքների, ամենամեծ բեռնվածությամբ և երթևեկության ինտենսիվությամբ

տնտեսական գոտիների տրանսպորտային սպասարկման համար, ինչպես նաև հրշեջ մեքենաների կամ տեխնիկայի մուտքի համար,

2) միջհատվածամասային ճանապարհներ, որոնք նախատեսված են տրանսպորտային միջոցների անցման համար՝ հուշարձաններ/հուշաքարեր տեղափոխելու և տարածքը մաքրելու նպատակով,

3) ներքին հատվածամասային ճանապարհներ, արահետներ և մայթեր, որոնք նախատեսված են հատվածամասերում հետիոտնային հաղորդակցման համար, իսկ ներհատվածամասային ճանապարհները՝ նաև ներքին մոտորիզացված տնտեսական տրանսպորտային միջոցների անցման համար,

4) Ճանապարհների լայնական կտրվածքի հիմնական տարրերը պետք է ընդունվեն ըստ աղյուսակ 2-ի:

Աղյուսակ 2

	Ճանապարհի տարրերի անվանումը	Տարբեր կատեգորիաների ճանապարհների ցուցանիշների մեծությունը			
		մայրուղային	միջհատվածա-մասային	ներհատվածա-մասային	հետիոտն ուղիներ
	շարժման շերտերի քանակը /հատ/	2 - 4	2	2	ըստ հաշվարկի
	երթևեկելի մասի լայնությունը /մ/	3,5 - 7,0	3,0	2,75	1,0
	կողնակի լայնությունը /մ/	2,0	1,5	1,0	0,5
	մայթի հետիոտն մասի լայնությունը /մ/	2,25	1,5	1,0 - 1,5	1,0

33. Կողնակների ամրացմամբ և բաց ջրահեռացման համակարգով ճանապարհային ցանց նախագծելիս լայնական կտրվածքը պետք է ընդունվի երկթեք՝ 2 - 3% թեքությամբ, կախված ծածկույթի տեսակից:

34. Ճանապարհների ծածկույթի տեսակը և կոնստրուկցիան սահմանվում է համաձայն աղյուսակ 3-ի՝ տրանսպորտային և գործառնական պահանջների և ճանապարհների կատեգորիաների հիման վրա՝ հաշվի առնելով տրանսպորտային միջոցների երթևեկության ինտենսիվությունը, կլիմայական և հողային-ջրաբանական պայմաններն, ինչպես նաև տեղական շինանյութերի օգտագործումը:

Աղյուսակ 3

Ճանապարհի կարգը	Ծածկույթի տեսակը
մայրուղային ճանապարհներ, հիմնական նրբանցքներ և հարթակներ, տնտեսական բակեր և միջհատվածամասային ճանապարհներ	նուրբ հատիկավոր ասֆալտբետոնե կամ հավաքովի բետոնե սալիկներ
ներհատվածամասային ճանապարհներ	խճաքարով բարելավված ցեմենտ-գրունտային խառնուրդները
հատվածների անցումներ	գրունտ՝բարելավված ցեմենտի կամ ավազամանրախճային խառնուրդով
մայթեր	ավազային ասֆալտ հավաքովի ե/բ սալեր

35. Հրշեջ մեքենաների անցման համար նախատեսված անցուղու երթևեկելի մասը պետք է առանցքի վրա ապահովի առնվազն 20 տոննա բեռնվածք

1) ասֆալտբետոնե ծածկույթով ճանապարհների երթևեկելի մասը պետք է սահմանազատվի առնվազն 15 X 30 սմ կտրվածքով բետոնե եզրաքարով, կամ կողնակը պետք է ամրացվի մանրացված քարով՝ 1,0 - 1,5 մ լայնությամբ հատվածում:

36. Բնական հոսքի հնարավորություն չունեցող կամ առավելագույն թույլատրելի թեքությունը գերազանցող հատվածներում անհրաժեշտ է իրականացնել տարածքի ինժեներական նախապատրաստման միջոցառումներ:

37. Դիակիզարանների և գերեզմանատների տարածքից մթնոլորտային և հալոցքաջրերի արտահոսքը պետք է իրականացվի ճանապարհային ցանցի երթևեկելի մասի կողային առուների երկայնքով: Բաց ջրահեռացման ցանցի դեպքում սեղանաձև կողային առուների կամ ջրանցքների չափերը պետք է ընդունվեն հետևյալ կերպ՝ հատակի լայնությունը ոչ պակաս 0.4 մ, խորությունը՝ 0.4 մ:

38. Լանջերին գերեզմանատներ կազմակերպելիս տարածքը ողողումից պաշտպանելու համար, վերին հատվածներում անհրաժեշտ է կազմակերպել լեռնային առուներ: Թույլատրվում է լանջերի դարավանդավորում:

39. Գերեզմանների միջև բացակների լայնությունը պետք է ընդունել առնվազն 0,5մ, գերեզմանների կամ դրանց կրկնակի շարքերի միջև արահետների լայնությունն՝ առնվազն 1 մ: Փոքրաչափ աղբի համար հետիոտնային երթուղիների երկայնքով անհրաժեշտ է նախատեսել աղբամանների տեղադրում:

40. Հուղարկավորության ծառայությունների համար շենքերի և շինությունների ճարտարապետական և հատակագծային լուծումները պետք է ընդունել հետևյալ հիմնական պահանջներին համապատասխան.

1) թաղմանը մասնակցող մարդկանց համար նախատեսված տարածքները պետք է մեկուսացված լինեն սպասարկող անձնակազմի աշխատանքի համար նախատեսված տարածքից և ապահովեն ձայնամեկուսացում.սանհանգույցներից և օդափոխման կայանքներից.

2) այցելուների համար բոլոր սենյակները պետք է ունենան հատակի նույն մակարդակ: Մահացածների սանիտարահիգիենիկ և վարսահարդարման նախապատրաստման տարածքները, հագցնելու, դագաղի մեջ դնելու և մահացածի կոսմետիկ պատրաստման,

մահացածների նախահուղարկավորության համար սառնարանային և տեխնիկական տարածքները թույլատրվում է տեղակայել ցոկոլային հարկում.

3) սենքերի մուտքային և ծիսակարգային խմբերը պետք է հատակագծային կազմակերպմամբ ապահովեն դրանցում միաժամանակյա երկու թափորների կացությունը՝ մեկ սրահով շենքում, իսկ երկսրահային շենքում՝ չորս թափորի, ապահովելով ամբողջական տեսողական մեկուսացում և կանխելով հոսքերի փոխհատումները և հանդիպումները գործընթացի բոլոր նախապատրաստական և ծիսական փուլերում:

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ, ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐ, ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

41. Հուշարձաններ են համարվում եռաչափ և հարթ ճարտարապետական ձևերը, ներառյալ քանդակը, հուշասյունը, պառկած և կանգնած սալերը, որոնք պարունակում են տեղեկություններ այն անձանց մասին, որոնց պատվին դրանք տեղադրված են (հուշատեղեկատվություն): Այն օբյեկտները, որոնք չեն պարունակում նման տեղեկատվություն, պետք է համարվեն այգեպուրակային ճարտարապետական ձևեր: Հիշատակի նշաններ են համարվում հարթ կամ ծավալային փոքր ձևերը, ներառյալ հիշատակի տեղեկատվություն պարունակող պաստառներ, որոնց տեղադրման համար նախատեսվում է 0,5 քառ. մ տարածք:

42. Վերգերեզմանային և հիշատակի կառույցներին դասվում են հիշատակի տեղեկատվություններ պարունակող կառույցները, որոնք ունեն ներքին տարածություններ կամ սենքեր: Նման կառույցներին են դասվում դամբարանները, պանթեոնները, դամբարանաշենքերը: Վերգերեզմանային կառույցներին են դասվում այն շինությունները, որոնք իրենց կազմում ունեն թաղումներ՝ անկախ նրանից դրանք տեղակայված են վերգետնյա տարածքում, թե կառույցի տակ:

43. Հիշատակի կառույցներ համարվում են այն կառույցները, որոնք չունեն թաղումներ, բայց տեղադրված են ի հիշատակ որևէ անձի և պարունակում են հիշատակի տեղեկատվություն.

1) հուշարձանների, գերեզմանների և հուշահամալիրների տեղադրումը գերեզմանատներում թույլատրվում է միայն թաղումների տարածքների սահմաններում:

2) տեղադրվելիք հուշարձաններն ու կառույցները չպետք է ունենան այդ տարածքի սահմաններից դուրս ցցված կամ կախված մասեր:

44. Դամբարաններն ու դամբարանաշենքերը պետք է դասակարգվեն որպես գերեզմանային շենքեր, որոնց նկատմամբ կիրառվում են համապատասխան պահանջներ.

1) դամբարաններում և դամբարանաշենքերում հուղարկավորությունները կարելի է կազմակերպել. դագաղներով՝ հողի մեջ, հերմետիկ սարկոֆագներում, աճյունասափորներով՝ աճյունախորշերում, հողի մեջ կամ բաց, ինչպես նաև այդպիսի թաղումների համադրություններ.

2) դամբարաններում և դամբարանաշենքերում չդիակիզված դիակները դագաղներում հուղարկավորելու համար պետք է տեղադրվեն կնքված սարկոֆագներ, եթե հուղարկավորությունը չի կատարվում հողի մեջ, շենքի կամ շինության հատակի տակ.

3) խորշերում թաղելիս թաղումը ծածկող սալը պետք է տեղադրվի այնպես, որ ապահովվի թաղման հերմետիկությունը.

4) դամբարանում կամ դամբարանաշենքում մարմինը դագաղով հողում թաղելիս գերեզմանի խորությունը պետք է լինի կառույցի հատակի մակարդակից առնվազն 2 մ խորության վրա՝ անկախ նրանից հատակը գետնի մակարդակում է, թե իջեցված է այս մակարդակից ցածր.

5) չի թույլատրվում 1-ին աստիճանից ցածր հարատևությամբ և 2-րդ աստիճանից ցածր հրակայունությամբ թաղման շենքերի կառուցում.

6) գերեզմանային շենքերը պետք է ունենան բնական օդափոխություն, բնական և արհեստական լուսավորություն.

7) հուշարձանների, գերեզմանաքարերի և հիշատակի շինությունների տեղակայման ժամանակ պետք է հաշվի առնել հետագա հուղարկավորությունների հնարավորությունը.

8) ճարտարապետական լուծումը, ինչպես նաև ներքին տարածքների և սենքերի չափերը պետք է ապահովեն հետագա հուղարկավորությունների, գերեզմանաքարերի և տարածքների այցելության և խնամքի հնարավորությունը.

9) թաղման համար նախատեսված շինություններում շենքեր գետնի մակարդակից ցածր կամ գետնի մակարդակին հավասար հատակ կառուցելիս հարկավոր է միջոցներ ձեռնարկել ներքին տարածքները հեղեղաջրերով և գրունտային ջրերով ջրածածկումը կանխելու համար.

10) դամբարաններում, գերեզմաններում և հիշատակի շինություններում մուտքային բացվածքները և շահագործվող տարածքների ներքին կազմակերպումը պետք է համապատասխանեն գործող հրդեհային նորմերի և կանոնների պահանջներին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ

45. Հուղարկավորությունների տեղակայման վայրերի ընտրությունը պետք է հիմնված լինի բնապահպանական և սանիտարահիգիենիկ փորձաքննությունների դրական եզրակացությունների վրա: Գերեզմանատների տեղակայման վայրեր ընտրելիս պետք է հաշվի առնել գրունտի հատկությունները: Առնվազն 2 մ խորության վրա գտնվող հողերը պետք է լինեն չոր, թեթև և օդաթափանց: Ստորերկրյա ջրերի մակարդակը չպետք է գերազանցի հողի մակարդակից 2,5 մ-ը.

1) անհրաժեշտ հիդրոերկրաբանական պայմանների բացակայության դեպքում անհրաժեշտ է իրականացնել նախատեսվող գերեզմանատան տարածքի ինժեներական նախապատրաստում, ներառյալ տարածքների չորացում, ջրահեռացման կազմակերպում, մակերևույթի պատում մանրահատիկ չոր գրունտով.

2) գերեզմանատների սանիտարապաշտպանիչ գոտիները պետք է սահմանվեն՝ ելնելով վտանգների տարածման գերակա ուղղություններից և հաշվի առնելով քամիների վարդը, գրունտային ջրերի հոսքի և կուտակման ուղղությունները, երկրաբանական խզվածքների առկայությունը և հողի ոչ միատարրությունը, ռելիեֆի և անձրևաջրերի հավաքման ուղղությունները, էլեկտրամագնիսական, էներգատեղեկատվական և կյանքի համար վտանգավոր այլ տեսակների ճառագայթման գոտիները.

3) գերեզմանատների սանիտարական պահպանության գոտիներում չի թույլատրվում կառուցել շենքեր և շինություններ մարդկանց երկարժամյա կեցությամբ (ամսական ավելի

քան 50 ժամ), ավտոտնակներ և կոմունալ շենքեր, ջրընդունիչներ և ջրհորներ կենցաղային և խմելու կարիքների համար, մանկական խաղահրապարակներ և մարզահրապարակներ ու շինություններ.

4) գերեզմանատան գործառնության ժամկետի ավարտից հետո սանիտարական պահպանության գոտիների չափի կրճատումն ու և դրանց օգտագործումը բնակելի, նախադպրոցական, կրթական և առողջապահական շենքեր և շինություններ կառուցելու համար արգելվում է.

5) օրենքով նախատեսված դեպքերում՝ գերեզմանատները լուծարելու, ինչպես նաև շինարարական աշխատանքների ընթացքում դրանց հատվածները հայտնաբերելու պարագայում, անհրաժեշտ է իրականացնել տարածքների ռեկուլտիվացիա: Լուծարված թաղման վայրերից հողերի օգտագործումը շինարարության համար չի թույլատրվում.

6) լուծարված գերեզմանատների տարածքը չի թույլատրվում օգտագործել բնակելի և արդյունաբերական շենքեր և շինություններ կառուցելու, մայրուղիներ և ճանապարհներ անկցանելու համար.

7) մահացածների մարմինները պահելու և մշակելու համար շենքերում և սենքերում պետք է միջոցներ ձեռնարկվեն գիշատիչների և կրծողների ներթափանցումից պաշտպանելու համար.

8) ջրընդունիչները և ջրհորները պետք է կազմակերպվեն գերեզմանատան սանիտարական պահպանության գոտիներից դուրս՝ գերեզմանի նկատմամբ առավել բարձր ջրատար հորիզոնի կողմից, կամ ստորերկրյա ջրերի հոսքի ուղղությունից վեր.

9) պաթոլոգոանատոմիական ծառայություններից արտադրական կեղտաջրերը, ինչպես նաև մարմինների պահեստավորման, դրանց լվացման և հրաժեշտի արարողության նախապատրաստման հետ կապված ծառայությունները համարվում են թունավոր և ենթակա են մաքրման: Այդ նպատակով այն շենքերում, որտեղ տեղակայված են այդպիսի ծառայությունները կամ դրանց հատկացված հողամասերում պետք է նախատեսվեն կեղտաջրերի մաքրման կետեր կամ համապատասխան մաքրման սարքավորումներ: Կոյուղու համակարգ, բաց տարածքներ, խրամատներ, խրամուղիներ չմաքրված կեղտաջրերի բացթողում չի թույլատրվում.

10) դիակիզարաններն ու ավանդական հուղարկավորության գերեզմանատները պետք է տեղակայված լինեն բնակելի կառուցապատման նկատմամբ հողմահարման ուղղությամբ (գերակշռող քամիների ուղղության).

11) գրունտային ջրերի բարձր մակարդակ ունեցող գերեզմանատան հողամասերը (հողի մակարդակից 1,9 մ-ի վրա) պետք է օգտագործվեն միայն դիակիզումից հետո թաղումների համար.

12) թունավոր բաղադրիչներ պարունակող կեղտաջրերը պետք է ախտահանվեն նախքան ջրահեռացման համակարգ բաց թողնելը՝ կեղտաջրերով հետագա նոսրացմամբ մինչև թույլատրելի խտության.

13) ավանդական թաղման գերեզմանատան սահմաններից մինչև ջրընդունիչ հեռավորությունը պետք է լինի առնվազն 1000 մ.

14) ավանդական գերեզմանատների տեղադրման համար հողամասերի հողերը պետք է ունենան ջրակայուն շերտ մինչ ջրանցիկ հորիզոն, որից ջուրը վերցվում է պարբերություններում սահմանված սահմաններից դուրս /10.3, 10.13/.

15) գերեզմանատներ նախագծելիս պետք է հնարավորինս պահպանել կանաչ տարածքները: Ընդ որում ծառի նվազագույն հեռավորությունը գերեզմանից պետք է լինի առնվազն 5 մ.

16) դիակիզման վառարանները պետք է ապահովեն արտանետվող գազերի պահանջվող նորմատիվ մաքրությունը կամ հագեցած լինեն ծխատար գազերի մաքրման համակարգով:

ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

42. Սգո նպատակների համար նախատեսված շենքերն ու կառույցները, ներառյալ պաշտամունքային շենքերը և շինությունները, պետք է նախագծված լինեն ՀՀՇՆ 31-03-2018 և ՀՀՇՆ21-01-2014 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան.

1) գերեզմանատների և դիակիզարանների տարածքներում հեղուկացված գազը պահելու համար, գազի բաշխման կետեր կամ բաքեր տեղադրելիս, պետք է նախատեսվեն

հրդեհային բացակներ և հրդեհի տարածումը կանխելու ինժեներական միջոցներ, ինչպես գազի պահեստարանները, համաձայն գործող հրդեհային անվտանգության կանոնների պահանջների.

2) ծիսական և դիակիզարանների սրահների պատերի և առաստաղների հարդարանքը պետք է պատրաստված լինի չայրվող նյութերից.

3) նույն ծավալում ծիսական և դիակիզման սենքերի բլոկացման դեպքում դրանք պարտադիր պետք է բաժանվեն I տիպի հրակայուն պատով.

4) ավտոմատ հրդեհային ազդարարմամբ սարքավորում են թաղման ծեսերի և դիակիզարանների շենքերում՝ բոլոր սենյակները, բացառությամբ սառնարանների, սանտեխնիկայի, ցնցուղների, սգո ծառայության բյուրոյում՝ բոլոր սենյակները, բացառությամբ սանիտարական հանգույցների: Ավտոմատ հրդեհային ազդանաշանի ընդունման կայանները պետք է տեղակայվեն մարդկանց մշտական ներկայությամբ սենյակում.

5) հուղարկավորությունների շենքերը սարքավորվում են վթարային լուսավորությամբ՝ մարդկանց տարհանումն ապահովելու համար.

6) օդափոխման խցիկները, օդատարները և խլացուցիչների պատերը պատրաստված են չայրվող նյութերից.

7) դիակիզման սրահում պետք է ապահովվի ծխահեռացում:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N1910-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)

ՀՀ կառավարության2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910 որոշմամբ հաստատված՝ «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին» որոշման մեջ փոփոխություն կատարելու նպատակն է իրավական ակտի կիրարկման ընթացքում ի հայտ եկած խնդիրների կանոնակարգումը՝ միջազգային փորձի կիրառմամբ՝ տարբեր հզորության և վտանգավորության աստիճանի օբյեկտների սանիտարապաշտպանիչ գոտիների համար տարբերակված նորմեր սահմանելով:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՀՀ կառավարության2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910 որոշման 4-րդ հավելվածով հաստատված կանոններով որպես սանիտարապաշտպանիչ գոտի՝ բնակելի տներից, դպրոցներից, նախադպրոցական, առողջապահական և հասարակական այլ շենքերից ու հանգստի գոտիներից գերեզմանատների ու դիակիզարանների կառուցման համար սահմանված է 300 մետր հեռավորություն՝ որում հաշվի առնված չեն վերջիններիս հզորությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցության վտանգավորության աստիճանը:

Գործող կարգում սահմանված չեն գերեզմանատների ու դիակիզարանների կառուցապատման հստակ կանոններ:

Կառուցապատված բնակավայրերում ոչ բոլոր դեպքերում է հնարավոր լինում ապահովել սահմանված 300 մետր /առավելագույն/ հեռավորությունը

3. Կարգավորման նպատակը և բնույթը

Նախագծով առաջարկվում է.

Գերեզմանատների ու դիակիզարանների սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը դասակարգել՝ ելնելով դրանց հզորությունից /մեծությունից/ և շրջակա միջավայրի վրա ազդեցության վտանգավորության աստիճանից, սահմանել կառուցապատման, բարեկարգման, բնապահպանական կանոններ:

Այդ նպատակով առաջարկվում է փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910 որոշման 4-րդ հավելվածով հաստատված կանոններում:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից:

5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունման արդյունքում հնարավորություն կստեղծվի ձևավորված բնակավայրերում կազմակերպել արդի չափանիշներին համապատասխան նոր տիպի գերեզմանատներ և դիակիզարաններ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N1910-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ

ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություն կատարել ՀՀՇՆ 30-01.2014 - ում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N1910-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխություններ չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N1910-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը տեղադրվել է նաև իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական www.e-draft.am կայքում: